

ԿԱՐԾԻՔ

ԱՒԽԱ ՂԱՐԻՔՅԱՆԻ

«ԿԱՆԱՆՑ ԿԵՐՊԱՐԿԵՐԸ «ՄԱՍՆԱ ԾՈՒԵՐ» ԷՊՈՍՈՒՄ»

ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկա ատենախոսությունը հանգամանալից և ամբողջական ուսումնասիրություն է՝ նվիրված հայկական ազգային էպոսի՝ «Մասնա ծոեր»-ի կանանց կերպարներին որպես վաղնջական ակունքներ ունեցող հերոսուհիներ, որոնց էպիկական դիմանկարներում հստակ տեսանելի են առասպելաբանական շերտեր:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն կարևոր հանգամանքով, որ չնայած բազմաթիվ բանագիտական և գրականագիտական աշխատությունների՝ ազգային էպոսի կերպարներին նվիրված տարաբնույթ անդրադարձներին, մինչ օրս կանանց կերպարների ուսումնասիրությունն անհրաժեշտ խորությամբ և հետևողականությամբ չի կատարվել:

Աշխատանքն ունի տրամաբանական կառուցվածք և հստակ շարադրանք: Այն բաղկացած է ներածությունից, երկու՝ «Կանանց արխաիկ-առասպելաբանական կերպարները «Մասնա ծոեր» էպոսում» և «Վեպի հերոսների կանայք. հակահերոսուհիներ. կանանց այլ կերպարներ» գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացվում են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, հիմնավորվում են կատարված հետազոտության արդիականությունն ու նորույթը, տեսական ու գործնական այժեքը և մեթոդաբանական հիմքերը: Եզրակացության մեջ տեղ են գտել ատենախոսության հիմնական դրույթները: Գրականության ցանկում ներկայացված են աշխատանքում օգտագործված տպագիր և էլեկտրոնային աղբյուրները:

Ատենախոսության առանցքային դրույթները կարող են ուշագրավ ներդրում լինել գրականագիտության, էպոսագիտության, բանագիտության, այդ թվում՝ գուգադրական բանագիտության, տեքստաբանության ոլորտներում իրականացվող ուսումնասիրությունների և ժանրային վերլուծությունների տիրույթում:

Այսպիսով, ներկայացված ատենախոսությունը հայկական էպոսի կին կերպարներին նվիրված բովանդակալից, հետաքրքիր և խոստումնալից աշխատանք է, ներկայանալի հետազոտություն՝ հանգամանալից և ինքնատիպ վերլուծություններով: Խիստ արժեքավոր է ատենախոսի գուգադրական մոտեցումը. հեղինակը փոխառնչություններ և ընդհանրություններ է բացահայտում հայ ազգային և օտար մշակույթների էպոսներում գործող համեմատելի կերպարների, հայկական էպոսի կին կերպարների և հնդեվրոպական առասպելաբանական ավանդույթների, Մայր Աստվածուհու արքետիպերի միջև: Նման մոտեցման շնորհիվ ուսումնասիրությունը հասում է հայկական նյութի սահմաններն ու վերածվում ոչ միայն միջժանրային, այլև միջմշակութային առավել ամբողջական և համոզիչ քննության:

Չեղինակի գլխավոր ձեռքբերումը ինքնատիպ և հիմնավորված վերլուծական մոտեցումն է՝ «Սասնա ծռեր»-ի կանանց կերպարների դերերի և գործառույթների վերախմբավորումը էպիկական ավանդույթի մեջ: Աշխատանքում կին կերպարները հանդես են գալիս ոչ թե սոսկ որպես օժանդակ կամ երկրորդային կերպարներ, այլ որպես առասպելաբանական հիշողության և ազգային ինքնության կրողներ, միջժանրային բազմաշերտ առնչությունների արդյունքում ձևավորված պերսոնաժներ:

Գրախոսիս համար առանձին հետաքրքրություն է ներկայացնում բանահյուսական ամենակայացած ու մոնումենտալ կերպարներից մեկի՝ էպոսի տարբեր պատումներում հանդես եկող պատավի կերպարի բազմաշերտ և մանրագին վերլուծությունը, ինչպես նաև այս կերպարի և վերջինիս հեքիաթային համարժեքների միջև փոխառնչությունների մեկնությունը: Չեղինակը հմտորեն բացահայտում է

կերպարի մեջ քողարկված ծիսական շերտերը, տարբեր ճյուղերում իրարից տարորոշվող գործառույթները:

Բարձր գնահատելով ատենախոսի կատարած հանգամանակից և բարեխիղճ հետազոտությունը՝ սեղմ կանգ առնենք մի շարք նկատառումների վրա, որոնցից առաջինն ավելի շատ մոտեցման կամ եզրերի կիրառման հարց է, քան առարկություն: Հեղինակի ներկայացրած որոշ դրույթներ սերտորեն առնչվում են բանագիտության մեջ ֆեմինիստական հայեցակետին՝ այս եզրի ակադեմիական ընկալմամբ՝ որպես տարբեր բանահյուսական ժանրերում կանանց կերպարների դերերի ուրույն կարևորում:

Ֆեմինիստական հայեցակետին հետևող տեսաբաններն ուսումնասիրում են՝ ինչպես են առասպելներում, հեքիաթում և էպոսում արտացոլվում գենդերային գործառույթները, վերականգնում են կին կերպարների թերարժևորված դերերը, վերանայում կանացի արքետիպերը մշակութային համատեքստերում: Ըստ էության, ատենախոսության հեղինակը վերախմաստավորում է էպոսագիտության ավանդական թեմաները նաև նշված տեսանկյունից միաժամանակ բացելով հետազոտության նոր ոլորտներ, սակայն չի բնութագրում իր մոտեցումը որպես ֆեմինիստական՝ թերևս փորձելով խուսափել այս եզրի փոքր ինչ չարաշահված կիրառությունից:

Քանի որ հեղինակի ուշադրության կենտրոնում են կին կերպարները, հետաքրքիր կլիներ փորձել բացահայտել կին հերոսների՝ ասացողի սեռով պայմանավորված առանձնահատկությունները, եթե այդպիսիք կան: Համաձայն ֆեմինիստական վերլուծության՝ տղամարդ ասացողներն օրինաչափորեն հակված են արտոնություններով օժտել տղամարդ կերպարներին, իսկ կին ասացողներն ավելի մեծ համակրանքով են լցված կին պերսոնաժների հանդեպ:

Ըստ իս, ուշագրավ կլիներ էպոսի բազմաթիվ պատումներին զուգահեռ թեկուզ հպանցիկ անդրադառնալ նաև թարգմանական տարբերակներին: Հասկանալիորեն վերջիններինս դիտարկումը չի մտնում աշխատանքի նպատակների մեջ,

այնուհանդերձ, հնարավոր է հետագա ուսումնասիրության մեջ, իսկ շնորհալի այս աշխատանքն ակնհայտորեն ունենալու է շարունակություն, նման հավելում կատարվի: Իր վերլուծության մեջ հեղինակը հիշատակում է Ֆրեդերիկ Ֆեդիի՝ «Մասնա ծոեր» էպոսի վերլուծությանը, սակայն չի անդրադարձել հայագետի ֆրանսերեն չափածո թարգմանությանը: Թարգմանությունը նաև կերպարների փոխանցումն է մեկ լեզվամշակույթից մյուսին և կախված նրանից, թե ինչպես է փոխակերպվում կերպարը թարգմանվածքում՝ կարող են բացահայտվել վերջինիս առանցքային հատկանիշներ: Այսպես, այն հանգամանքը, որ Լևոն Զավեն Սյուրմեյանը արտատեր պառավին «փոխանցել է» անգլերեն որպես «*artater barav*», խոսում է կերպարի անթարգմանելիության՝ այն է ազգային ինքնության անկրկնելիության մասին:

Աշխատանքում կան որոշ տեխնիկական թերացումներ. մատենագիտության մեջ տեղ են գտել առանձին անճշտություններ անգլերեն և գերմաներեն աշխատությունների վերնագրերում: Այսպես, գրականության ցանկում (էջ 210) նշված է *dos Mutterrec, EineUntersuchwig uber die Gynaikokratie derAlten Welt nach ihrer religiosen und rechtlichen Natur*, պետք է լինի *Das Mutterrecht. Eine Untersuchung über die Gynaikokratie der alten Welt nach ihrer religiösen und rechtlichen Natur*, նշված է *A Study of the Sosial Origins of Greek Religion, Cambrige University Press*, պետք է լինի *A Study of the Social Origins of Greek Religion, Cambridge University Press*.

Նշվածները սոսկ խմբագրական բնույթ են կրում և չեն նսեմացնում աշխատանքի տեսական ու գործնական արժանիքները: Մեր առջև լուրջ, շնորհալի և համարձակ աշխատանք է: Ընդհանուր բովանդակությամբ, վերլուծական նյութի պատկառելի ծավալով, աշխատանքի տեսական և մեկնողական մասերի հազեցվածությամբ Ալինա Ղարիբյանի թեկնածուական ատենախոսությունը լիովին բավարարում է թեկնածուական աշխատանքին ներկայացվող պահանջները:

Ասվածը հնարավորություն է տալիս միջնորդել Ալինա Ղարիբյանին՝ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի 003 մասնագիտական

խորհրդին պաշտպանության ներկայացրած «Կանանց կերպարները «Մասնա ծոեր»
Էպոսում» թեմայով թեկնածուական ատենախոսության համար շնորհել
բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան:

բ. գ. դ. Ալվարդ Զիվանյան

Ա. Ն. Զիվանյանի ստորագրությունը հաստատում եմ
27 մայիսի 2026թ.

Յ. Գ. Կ. Քոչարյան Ժամգոյար, Բ. Գ. Բ., Կոչեճեր
ՄԵԻԲ Կոմիտեի նախագահ Սեդրակյան



Սեդրակյան
2